# ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

***Գրիգորյան Ա. Ֆ.***

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանի տնօրեն*

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** թանգարանային մանկավարժություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այցելուներ, թանգարանային կրթական ծրագրեր, թիրախային խմբեր:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի ներկայիս բարեփոխումները միտված են ինտեգրվելու միջազգային կրթական դաշտին, ապահովելու համար ուսուցման որակն ու բարձրացնելու արդյունավետությունը, որտեղ իր ուրույն տեղն ու դերն ունի նաև թանգարանը՝ ի սկզբանե հնարավորություն ունենալով վերացնելու դասագործընթացի տարածքային և ժամանակային սահմանափակումները:

Թանգարանային մանկավարժության խնդիրների քննարկման համատեքստում կրթություն հասկացությունը մեկնաբանվում է լայնորեն՝ որպես «...մարդու զարգացում, նրա անհատական գծերի, հոգեկան հատկությունների, աշխարհի հանդեպ արժևորող հարաբերությունների կրթություն»: [6]

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այցելուները հաճախ դուրս են մնում սոցիալական և մշակութային առումով պայմանավորված կրթական տարածքից, կոպտորեն խախտվում է անձի կապը մշակույթի՝ որպես զարգացման աղբյուրի և հասարակության հետ: Թանգարանային կրթական գործունեությունը գեղագիտական, պատմագեղարվեստական, հումանիտար-միջառարկայական, տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությունների հետ մեկտեղ իրականացվում է նաև սոցիալական կողմնորոշման և արտթերապիայի բնագավառում:

Թանգարանային աշխատանքի «հնաոճ» մեթոդները պահանջում են ոչ միայն տեխնիկական և տեղեկատվական վերակառուցում, այլ նաև մեթոդիկայի փոփոխում: [2]

Ինչպես նշում է թանգարանային մանկավարժության հայտնի մասնագետ Բ. Ա. Ստոլյարովը, «...բացի առերևույթ աննկատելի ունակությունների բացահայտումից և զարգացումից, պարապմունքների արդյունքում երեխաների մոտ առաջանում է ստեղծագործական գործընթացին մասնակցելու հաճույքի զգացողություն, իսկ արվեստի գործերի մեկնաբանման հնարավորությունը բարձրացնում է նրանց գեղարվեստական իրազեկումն ու նպաստում սեփական անձի կարևորության զգացողության առաջացմանը»: [5]

Ժամանակակից թանգարանը՝ որպես զարգացման շեղումներ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության միջոց հանդիսանում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մարդկանց հասարակության շարքերում ինտեգրելու վայր և ի վիճակի է որոշակի չափով աջակցել հատուկ դպրոցների առջև դրված կրթադաստիարակչական աշխատանքներին:

Թանգարանային հատուկ ծրագրերը հնարավորություն են տալիս այցելուներին արտահայտել իրենց զգացմունքները նկարչության, քանդակի, գեղանկարի միջոցով՝ պակասեցնելով ներքին լարվածության չափը, որը հաճախ առաջանում է տարբեր շեղումներ ունեցող անձանց մոտ և նպաստում է նրանց ներքին հսկողության և կազմակերպվածության զգացողության առաջացմանը:

Բոստոնի մանկական թանգարանը առաջինն էր, որտեղ դեռևս 1915թ. կազմակերպվեցին հատուկ ծրագրեր կույր և խուլ երեխաների համար: 20-րդ դարի սկզբին Վ.Մ. Բեխտերևը սկսեց կիրառել հիվանդների վերականգնումը նրանց նկարչական աշխատանքների ուսումնասիրության հիման վրա: Հետագայում հոգեբուժության այս ուղղությունը ստացավ արտթերապիա անվանումը: : [3]

1991թ. Ս.-Պետերբուրգի Պետական ռուսական թանգարանում առաջին անգամ կազմակերպվեց «Այլ աչքերով» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին տեսողական խնդիրներ ունեցող երեխաների աշխատանքները: [4]

Հայաստանում առաջին անգամ 2005թ-ին Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպվեց Ց.Ա. Բերտրանի «Երկիրը երկնքից» ցուցահանդեսը, որի միջոցով հեղինակը կամենում էր կիսել իր լուսանկարչական հայացքները ոչ միայն սովորական այցելուների, այլ նաև՝ թույլ տեսնողների և կույրերի հետ: Առաջին անգամ, թույլ տեսնող կամ կույր մարդիկ հնարավորություն ունեցան հաղորդակցվելու հուզմունք առաջացնող զարմանահրաշ այդ նկարներին: «Երկիրը երկնքից կույրերի համար» ցուցահանդեսը ոչ միայն պատուհան բացեց դեպի աշխարհ կույրերի համար, այլև առանձնահատուկ նշանակություն ունեցավ տեսնող մարդկանց համար: Ակնոց պատրաստող նշանավոր ֆիրմայի հիմնադիր, ծագումով հայ Ալեն Միկլին, ընդունելով մարտահրավերը, ցելյուլոզի ացետատից պատրաստեց լուսանկարների տակտիլ տարբերակը: Պատկերները փորագրված էին համակարգչային նորագույն ծրագրերի միջոցով:

Վերջին տարիներին թանգարաներն առավել հաճախ են անդրադառնում թիրախային հատուկ խմբերի հետ կազմակերպվող աշխատանքներին: Այդպիսի ծրագրեր իրականացվել են Հայաստանի ազգային պատկերասրահում, «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում [1], Հովհաննես Թումանյանի անվան թանգարանում, ՀՊՄՀ-ի թանգարանում, Վանաձորի Կերպարվեստի թանգարանում:

Մեր կողմից անցկացված հետազոտական աշխատանքների շրջանակներում, ուսումնասիրելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի եվրոպական (Գերմանիա- Բեռլին, Դրեզդեն, Լայպցիք, Էրֆուրտ – 1986թ., Բոնն, Քյոլն – 2010թ ), ռուսական (Ս.-Պետերբուրգ - 1986թ, Մոսկվա - 1989թ.) և ամերիկյան (Բոստոն – 2007թ.) փորձը, պետք է փաստենք, որ հատուկ կարիքներ ունեցող խմբերի հետ աշխատող թանգարանների գործունեությունը պայմանավորված է որոշակի առանձնահատկություններով, որոնք էլ ապահովում են առաջադրված մանկավարժական խնդիրների, գործունեության սկզբունքների և աշխատաձևերի արդյունավետությունը:

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը իր գործունեության շրջանակներում մեծ տեղ է հատկացնում հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքներին: Հատուկ խմբերի համար կրթական ծրագրեր նախապատրաստելու և իրականացնելու համար անհրաժեշտ է համագործակցել մասնագետների հետ: Սա այն նուրբ ոլորտ է, որտեղ անտեղյակությունը կարող է ոչ միայն չօգնել, այլ նույնիսկ վնաս հասցնել: Այդ համատեքստում թանգարանը աշխատում է Հատուկ կրթության ֆակուլտետի հետ համատեղ, իսկ 2013թ.-ի հոկտեմբերի 30-ից «Արի-Արի» հիմնադրամի հետ կնքված պայմանագրի շրջանակներում համագործակցում է կույր և թույլ տեսնող անձանց հիմնախնդիրներով զբաղվող լեհական «Արի-Արի» հիմնադրամի հետ, որի նպատակն է՝ Լեհաստանում այս ոլորտում ձևավորված հարուստ փորձը փոխանցել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համապատասխան հիմնախնդիրներով զբաղվող կառույցների մասնագետներին:

Լեհական «Արի-Արի» հիմնադրամի ներկայացուցիչ, տիֆլոմանկավարժ Մարեկ Յակուբովսկին 2013թ. հոկտեմբերին մանկավարժական համալսարան կատարած իր այցի շրջանակներում եղավ նաև ՀՊՄՀ թանգարանում, որն էլ հիմք դրեց թանգարան-հիմնադրամ հետագա համագործակցությանը: Մ. Յակուբովսկին հանդես եկավ «Կույրերի և թույլ տեսնողների տարածական կողմնորոշումը թանգարանում» թեմայով դասախոսությամբ, խորհրդատվություն անցկացրեց թանգարանի աշխատակիցների հետ: Մասնագետների խորհուրդով թանգարանը համագործակցում է նաև Երևանի թիվ 14 հատուկ դպրոցի հետ: Դպրոցի մասնագետների աջակցությամբ թանգարանում տեղադրվել են բրայլյան տարբերակով տպագրված անոտացիոն տեքստեր, վահանակներ:

Անհրաժեշտ անվտանգության առումով մանկավարժական համալսարանի մուտքի աստիճանահարթակի առաջին և վերջին աստիճանների եզրերը գծանշվել են դեղին գույնով, ինչն էլ նպաստում է թույլ տեսնողների ինքնուրույն տեղաշարժման գործընթացի դյուրինացմանը:

Տեսողական խնդիրներ ունեցող այցելուին թանգարանում ինքնուրույն շրջելու և էքսկուրսիոն տեքստն ունկնդրելու նպատակով որոշեցինք հարմարեցնել թանգարանում գործող աուդիոգիդ համակարգը: Այցելուները այժմ հնարավորություն ունեն տեքստը լսել ոչ միայն թանգարանում, այլ նաև նորագույն տեխնոլոգիաների միջոցով բեռնել տեքստը՝ տանը հանձնարարություններ և առաջադրանքներ կատարելու համար:

Լսողական խնդիրներ ունեցող այցելուների համար կրթական ծրագրեր կազմակերպելիս թվում էր դժվարությունների չենք հանդիպի, քանի որ տպագիր տեքստերը կան և՛ ցուցապաստառների, և՛ աուդիոգիդ համակարգում տեղադրված էկրանների վրա: Սակայն փորձարկման արդյունքում պարզվեց, որ տվյալ լսարանը ավելի լավ էր ընկալում ժեստերի լեզուն, այդ պատճառով սուրդոթարգմանչի օգնությամբ նախապատրաստեցինք և տեսագրեցինք էքսկուրսիոն տեքստի սուրդոթարգմանությունը:

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանում աուդիոգիդ համակարգի կիրառումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այցելուների համար հավանության արժանացավ Եվրոպական թանգարանների ցանցի (NEMO) կողմից և եվրոպական թանգարաններին առաջարկվեց կիրառել այդ փորձը իրենց աշխատանքում:

2015թ. հունվարին Հատուկ կրթության ֆակուլտետի մասնագետները և նույն ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողները փորձարկեցին ու գնահատեցին թույլ տեսնողների և կույրերի համար տեղադրված նյութերի կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը: Այս աշխատանքը շարունակական բնույթ է կրում և զարգացման կարիք ունի: Հուսով եմ, համալսարանի մասնագետների և ուսանողների հետ համագործակցության փորձը կհանգեցնի այնպիսի արդյունքների, որոնք հնարավոր կլինի կիրառել Հանրապետության թանգարաններում, քանի որ մեր թանգարանում աշխատանքներն այս բնագավառում դեռ, սակայն կարծում ենք, որ այս դաշտում հետևողական աշխատանքը կտա առողջ ծիլեր, ինչ էլ հետագայում հնարավորություն կստեղծի այցելուներին ադապտացվել սոցիալական միջավայրին, որոշել իրենցից յուրաքանչյուրի համար առավել կարևոր մշակութային արժեքներ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պողոսյան Դ., Սահմանափակ կարողություններով անձանց հաղորդակցությունը մշակութային ժառանգությանը: // Թանգարան, գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես: Երևան, 2011, էջ 79-89

2. Иванова Ю. А. Музейная педагогика для детей с ОВЗ. http://festival.1september.ru/articles/640411/, стр. 2

3. Остер Д., Гоулд П. Рисунок в психотерапии: Пер. С англ. М., 2001

4. Платонова О. В., Жвитиашвили Н. Ю., Арттерапия в художественном музее. Учебное пособие для студентов гуманитарно художественных вузов, С.-Петербург, СпецЛит, 2000

5. Столяров Б.А. - Музейная педагогика. Учеб. пособие, М., 2006, с. 114.]

6. Юхневич М.Ю., Я поведу тебя в музей. Учебное пособие по музейной педагогике. М.: Гос. Ин-т культурологии, 2001, 223 с, стр.16

## РЕЗЮМЕ

## АДАПТАЦИЯ МУЗЕЕВ ДЛЯ ЛИЦ С ОСОБЫМИ ПОТРЕБНОСТЯМИ ОБРАЗОВАНИЯ

**Григорян А. Ф.**

*Директор музея Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна*

Современный музей как средство социальной адаптации, является местом интеграции в ряды общества людей с особыми образовательными потребностями и в состоянии оказать поддержку специальным школам в решении определенных образовательных задач. Музей Армянского государственногой педагогического университета им. Х. Абовяна в своей деятельности уделяет особое внимание посетителям с особыми образовательными потребностями. В деле подготовки и реализации музейных программ для специальных групп наши сотрудники работают со специалистами и студентами магистратуры университета, что приводит к положительным результатам и часто используется в различных музеях республики.

**SUMMARY**

**ADAPTATIONS OF MUSEUMS FOR PEOPLE WITH SPECIAL NEEDS**

**Grigoryan A.F.**

*Director of museum in Khachatur Abovyan Armenian State Pedagogical University*

Contemporary museum as a means of social adaptation is the site of integration into the society of people with special educational needs and is able to provide support to special schools in addressing specific educational objectives. Museum of the Armenian state pedagogical university after Kh. Abovyan in its activity focuses on visitors with special educational needs. In the preparation and implementation of museum programs for special groups our museum workers cooperate with the specialists and students of the University, which leads to positive results and is often used in various museums of the country.